

րակութիւններն այն ժամանակ միայն  
պիտի կարենան յառաջագիմական ազ-  
դեցութիւն ունենալ, երբ սխիւն մաս-  
նաւոր ճիւղեր մշակել, և այն ժամա-  
նակ միայն քաջալերութիւն պիտի գրա-  
նեն, երբ ամեն օր հակասութեանց

մէջ չը թաւալին, ամեն օր տարբեր  
գոյներ չըստանան, այլ միայն ճշմար-  
տութեան ծառայեն, որոյ մէջ է ամեն  
զօրութիւն մտաւորական և բարոյա-  
կան ազդեցութեան:

## Մ Ե Ղ Ա Յ Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ

( Խօսք Ազգային երգի \* )

**ՂԱՐԻՐ** <sup>1</sup> տեղ նաչաղ <sup>2</sup> եմ՝ հալըս <sup>3</sup> փերիչան <sup>4</sup>,  
Քանի որ կենդան եմ՝ մեղայ Աստուծոյ .  
Սուրբ Եկեղեցի՝ Քահանայ չը կայ,  
Տէր, քեզ խոստովանիմ՝, մեղայ Աստուծոյ,  
**Մեղայ** քո ամենայն՝ սուրբ պատուիրանայ,  
Շատ մեղք եմ գործել՝ ընդդէմ օրինայ .  
Հայր երկնաւոր Աստուած՝ ճար մեղաւորաց,  
Անգեղ չը մեռանիմ՝ մեղայ Աստուծոյ:

\* Ազգային երգչաց վերայ ար-  
դէն խօսած եւք Սիօնի անցած տարւոյ  
թիւերուն մէջ, յայտնելով ՚ի միջի  
այլոց, որ մեր ազգային երգիչներն  
հայրենասիրութեան եւ կրօնասիրու-  
թեան տեսակ մի քարոզիչներ են: Ի-  
րենց քնարն առած յերկրէ յերկիր և  
քաղաքէ քաղաք կը թափառին. իրենց  
երգերով մերթ կ'ուրախացնեն, մերթ  
խրատ կը տան: Իրենց կեանքն գրեթէ  
շարունակ պանդխտութիւն է. շատ  
անգամ կը հիւանդանան իրենց ճանա-  
պարհորդութեան մէջ, տակաւին քա-  
ղաք մի կամ գիւղ մի չը հասած, շատ ան-  
գամ ժամերգութեան և պատարագի  
կարօտ կը մնան, թէ և շատ կը սիրեն:

Ազգային երգչաց կենաց այն պարա-  
գաներն, թէ և շատ հետաքրքրական,  
բայց կենսագրական կերպիւ գրուած  
և պահուած չեն ամենեւին, այլ մի-  
այն աղօտ կերպիւ իրենց երգերուն  
մէջ կը նշմարուին:

Այսպէս ահա՛ կը տեսնեմք, որ  
**ՂԱՐԻՐ**-**ԱՐԴՆԻ** Զուղայեցի ազգային եր-  
գիչն, յայտնի չէ թէ ուր, պանդխտ  
տութեան մէջ հիւանդանալով, եկե-  
ղեցի եւ քահանայ չը գտնելով իւր  
քնարն ձեռքն առած, թերեւս գետ-  
նախշի, եւ ծառի կամ քարի մը  
տակ, ձայն բարձրացնելով Զղայ կը  
գոչէ Աստուծոյ եւ թողութիւն կը  
հայցէ:

<sup>1</sup> Ղարիւր. — պանդխտ, օտար:

<sup>4</sup> Փերիչան. — թշուառ, զղձ:

<sup>2</sup> Նաչաղ. — հիւանդ, տկար:


<sup>3</sup> Հալըս. — վեժմիս:



Տէր իմ եւ Աստուած՝ փառք քեզ գոհութիւն ,  
 Տո՛ւր ինձ զըղձւամբ բարի գործք արքայութիւն ,  
 Իմ անօրէն մեղացքս՝ շնորհեա՛ն թողութիւն ,  
 Մեղացէս փոշման եմ՝ մեղայ Աստուծոյ ։

Մի՛ թողուր զես , Տէ՛ր , առանց Աջի քոյ ,  
 Վարն Սըբոյ անարատի Խաչի քոյ .  
 Հայր մեղայ յերկինքս՝ եւ առաջի քոյ .  
 Թողութիւն գըտանեմ՝ մեղայ Աստուծոյ ։

Գոչեմ մեղայ , Տէ՛ր իմ ,՝ Աստուած ողորմած ,  
 Բարերար , բազումօղորմ եւ գըթած .  
 Մեղաւոր ԱՐՁՈՒՆՈՒՄ՝ տո՛ւր հոգեւոր հայ ,  
 Հետքս պաշար տանեմ՝ մեղայ Աստուծոյ ։



Գերադասիւ Գալուստ Ծ . Վար-  
 դայեան Փափաղեանց , որ քանի մի  
 ամսէ ՚ի վեր ՚ի Ս . Աթուռս կը գտնուի  
 ուխտաւորական միթմարութեամբ եւ  
 օգտփոխութեամբ իւր բազմամեայ  
 տկարութիւնն կողդուրելու եւ զըժ-  
 ուարակիր ցաւերն բուժելու համար ,

իւր գրաւոր երկատիրութիւններէն  
 հետեւեալ երկու տաղաչափութիւն-  
 ներն ( մին իւր վաղամեակի Աշոտ որ-  
 դւոյ մահուան առթիւ գրած , իսկ միւ-  
 սն Գերմաներէնէ թարգմանած ) խըճ  
 բազրութեանս յանձնեց , զորս կը փու-  
 թամբ յօժարութեամբ հրատարակել ։

## Ա Շ Ո Տ

Ա .

ԳԵՂԱՋՈՒԱՐՃ գարունն արդէն եկել էր ,  
 Վարդակարմիր առաւօտով ներկուած .  
 Նուրբ մառախուղ ծմակն շուրջ պատել էր ,  
 Ինչպէս շղարջ՝ նորահարսի ծածանուած ։  
 Աշոտս յայնժամ Բեկս (1) աղբեր մօտ սիրտն ՚ի խինդ՝  
 Նստած նայէր յայդ տեսարան երկնագեղ ,  
 Տեսաւ ինչպէս ծառոց ոստերն խիտ առ խիտ  
 Կախուած էին մէգի միջով շեղ ՚ի շեղ ,

(1) Բէկս կամ Բէկի աղբիւր . կէս ժամ հեռի Շուշն քաղաքէն , ունի  
 բարեհամ ջուր եւ զեղատեսիլ շրջակայք ։